



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Այսպես էլ ապրում ենք

Ասել է թե՛ յուրաքանչյուր նոր պատերազմ հիմնականում ծագում է նախորդի ժամանակ թույլ տված թերություններից կամ նախորդից հետո ստեղծված անթույլատրելի իրավիճակներից: Այդ իրավիճակները լինում են տարբեր՝ երկրի ներսում հետպատերազմական տարբեր զարգացումների, իշխանությունների եւ հասարակական շրջանակների ճիշտ կամ սխալ գործունեության հետ կապված: Հաճախ պատերազմից հետո այդ շրջանակները կամ դրանցից որեւէ մեկը մատնվում են թմբիկի, եւ հոգևածությունն ու ձանձրույթը ստեղծում են այնպիսի իրավիճակ, որը հնարավոր է կոչել մեկ բառով՝ անտարբերություն: Ոմանք այն այդպես չեն կոչում, այլ անվանում են բնականոն կյանքին վերադառնալու վիճակ, չէ՞ որ մարդիկ պետք է ձեռքբերեն պատերազմի սթրեսից եւ նորմալ կյանքի անցնեն: Հարց է՝ ով ինչպես է հասկանում բնականոն կյանք ասվածը եւ ով ինչ գործողությամբ է զբաղվում այդ բնականոն կյանքի ընթացքում: Սա է ստեղծում իրավիճակներ, որոնք կամ տանում են դեպի առաջխաղացում, դեպի ձեռքբերումներ, կամ էլ հակառակ՝ դեպի անկում, իսկ անկումներից շատ հաճախ դժվար է լինում բարձրանալը, հատկապես եթե թիկունքիդ ունենում ես ուժեղ հակառակորդ, ով հետեւում ու տեսնում է քո ամեն մի քայլը՝ պատրաստ հարմար պահի հարվածելու մեջքից:

Շատ հաճախ պատերազմից հետո թմբիկի մատնված հասարակությունը իր շուրջը կատարվող բազմապիսի արատավոր երեւոյթները չի նկատում կամ էլ աչք է փակում այս կամ այն իշխանավորի, զինվորականի կամ որեւէ մեկի անընդունելի քայլերի վրա՝ առաջնորդվելով «մեկ է՝ ոչինչ չի փոխվի» կարգախոսով: Շատերին հետաքրքրում են սոսկ իրենց ու մաքսիմում իրենց հարեւանի սոցիալական խնդիրները, իսկ թե իրենց համար կարելու որոշումները ո՞ր փակ դռների հետեւում են կայացվում, ի՞նչ պայմաններում, քչերին է հետաքրքրում: Այսպիսի կեցվածքը թույլ է տալիս թե՛ երկրի իշխանություններին, թե՛ այդ երկրի զարգացումներին հետեւող միջազգային հանրությանը՝ չընկալել տվյալ հասարակությանը որպես գործոն, հետեւաբար եւ՝ հաշվետու չլինել նրա առաջ, որովհետեւ գիտեն, թե մինչեւ որտեղ է հասնում այդ հասարակության հետաքրքրվածության սահմանը եւ որքան կարող է տեսել նրա հետեւողականությունը:

Բոլորը սիրում են խոսել, ոմանք իրենց բազում կամ աշխատավայրում քննադատում են, վերլուծություններ անում, բայց բոլորը սպասում են, որ ինչ-որ մեկը ինչ-որ պահի պիտի իրենց համախմբի, գործի մղի, թեկուզ՝ ըմբոստության: Թե դա ով կլինի կամ երբ կլինի՝ չգիտեն, միայն գիտեն, որ մեկը պիտի դա անի, պարտավոր է անել ու չի անում: Հետո այս ամենին հետեւում է ձանձրույթը, իսկ ոմանք ասում են. «Այստեղ ապրելու տեղ չէ, լավ է գնամ, գլխիս ճարը տեսնեմ»: Այսպես շատանում են ռուսաստաններում ու ամերիկաններում դեգերողները, որովհետեւ կարելուորը, որ իրենց գլխի ճարը տեսնեն, թե չէ իրենց մասին իրենցից բացի մտածող չկա... Իսկ հետո՞... Հետո՞ աշխարհը մեծ է. ի՞նչ գիտես՝ վաղը ինչ կլինի: Իսկ եթե, Աստված մի արասցե, հանկարծ պատերազմ լինի, մեղավոր են երկրում մնացողները եւ այդ մնացողների վրա իշխող ղեկավարությունը, իսկ իրենք... Իրենք՝ հնարավորության սահմաններում իրենց «գլխի ճարը տեսածները», չեն թողնի, որ իրենց բարեկամներն ու հարազատները մնան պատերազմի ճիւղում. փող կուղարկեն, կկանչեն արտասահման ու կվտարեն՝ ո՞ւմ համար են մնում, ո՞ւմ համար են կռվում, եթե երկրի այս կամ այն պաշտոնյան իր որդուն արդեն փախցրել է երկրից եւ պատերազմի ընթացքն ու լուծումն էլ վերելների ձեռքում է, գուցե՛ն՝ արդեն պայմանավորված... Ռուսաստաններում հայտնված շատերն էլ մի՞գուցե հուզվեն, խնամի-բարեկամներով հավաքվեն, գումար հայթայթեն, օգտակար լինեն հայրենիքին, որպեսզի հետո իրենց զավակներին ասեն՝ մենք մեր հոգու պարտքը կատարեցինք, դուք էլ նույնը կանեք, եթե պատերազմ լինի...

Եւ այսպես էլ ապրում ենք...



ԼՂՀ ԱԺ նիստում «Դաշնակցություն» խմբակցությունը հանդես է եկել հայտարարությամբ

Հայտարարություն

Մեկ տարուց ավել է՝ ինչ իր աշխատանքներն է սկսել ԼՂՀ 6-րդ գումարման ԱԺ-ն:

Անցած մեկ տարվա ընթացքում մենք առնչվել ենք բազմաթիվ հիմնախնդիրների քաղաքական, տնտեսական, սոցիալական, պետական կառավարման համակարգի եւ այլն:

Հավատարիմ 2015թ. նախընտրական քարոզարշավի սկզբունքներին՝ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունն անցած տարվա ընթացքում փորձեց իր հնարավորություններն ի սպաս դնել օրենսդրական դաշտի, օրենսդիր-գործադիր հարաբերությունների, հասարակության հետ մշտական կապի ապահովման, խորհրդարանական դիվանագիտության զարգացման եւ այլ ուղղություններում տարվող աշխատանքներում:

«Դաշնակցություն» խմբակցության համար որքանով կարեւոր էր արտաքին ճակատի վրա տարվող աշխատանքները, անվտանգության հիմնախնդիրները, նույնքանով էլ ընդգծելի էր ներքին կյանքին առնչվող բոլոր հարցերը:

Կարեւոր մի գործընթաց է նաեւ երկրում՝ Սահմանադրական բարեփոխումների իրականացումը եւ պառլամենտական համակարգի արմատավորումը, որը, մեր գնահատմամբ, իր ազդեցությունը կունենա եւ խթան կհանդիսանա Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման վրա: Սակայն խորհրդարանում գործող «Դաշնակցություն» խմբակցության համար հարցերի հարցը, ինչպես նախկինում, մնում է Ղարաբաղի չհանգուցալուծված հիմնախնդիրը՝ իր բոլոր երեւացող ու չերեւացող կողմերով:

Վերջին տարիներին բանակցությունների միջոցով Արցախյան հիմնախնդիր լուծումը, Ադրբեջանի հավակնող առավելապաշտական պա-

հանջների պատճառով, անընդհատ ձախողվել է:

Հիմնախնդրով զբաղվող եւ տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող որոշ երկրներ ու միջազգային ուժեր տարիներ շարունակ իրենց մոտեցումներով կեղծ հավասարության նշան են դրել կողմերի միջեւ՝ դրանով ոգեւորելով Ադրբեջանի ագրեսիվ նկրտումները: Այդ գործելաոճը տարիների ընթացքում դարձել է իշխող՝ առանց ԼՂՀ ժողովրդի կարծիքն ու մոտեցումները հաշվի առնելու: Այդ գործելաոճի արդյունքում բանակցությունների կյուրթ են դարձել սկզբունքներ ու ծնվել փաստաթղթեր, որոնք ամբողջապես անտեսում են Արցախի ժողովրդի իրական ու իրավական իրավունքները: Հենց այդ ամենի արդյունքն են ապրիլյան իրադարձությունները՝ իրենց բոլոր հետեւանքներով:

Ապրիլյան պատերազմական գործողությունների ավարտին եւ երկու նախագահների Վիեննայի ու Ս. Պետերբուրգի հանդիպումներից հետո, այսօր թե՛ միջազգային, թե՛ հայկական շրջանակներում խոսք է գնում Արցախի հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցությունների մասին: Տարաբնույթ ու հակասական տեսակետները կողմերի դիրքորոշման ձեւակերպումների վերաբերյալ որոշ մտահոգություններ են առաջացնում:

Առ այդ՝ ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը մեկ անգամ եւս բարձրացնում է եւ վերահաստատում, որ՝

- Արցախի Հանրապետության անկախության միջազգային ճանաչումը շարունակում է մնալ արտաքին ճակատում մեր գործունեության անկյունաքարային հարցերից մեկը:

Բանակցությունների առկայությունը չի կարող արգելք համարվել ԼՂՀ անկախության ճանաչմանը: Ընդհակառակը՝ տարբեր մակարդակի ճա-

նաչման քայլերը կզսպեն Ադրբեջանին եւ նրան կմղեն կառուցողական կեցվածք դրսևորելու: Ուրեմն հարկ է շարունակել ԼՂՀ միջազգային ճանաչման խնդրի հետապնդումը: Որպես ԼՂՀ անկախության ճանաչման եւ անվտանգության երաշխիք՝ անհրաժեշտ է, հետամուտ լինել ՀՀ եւ ԼՂՀ միջեւ ռազմաքաղաքական դաշինքի կնքմանը:

Բանակցային գործընթացում առաջնորդվել Արցախի ժողովրդի 1991թ. անկախության եւ 2006թ. ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրված համաժողովրդական հանրաքվեներով արդեն իսկ կայացած կամարտահայտությամբ:

- Արցախի հարցի լուծման ներկա փուլում ԼՂՀ-ն դարձնել բանակցային գործընթացի լիիրավ մասնակից:

Անթույլատրելի է խոսել հայկական կողմի որեւէ զիջման մասին: Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կիրառել է իր ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի եւ ԽՍՀՄ Սահմանադրության հիման վրա:

1991-1994թթ. Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ մղվող պատերազմում Ադրբեջանը նախահարձակ էր: ԼՂՀ-ն պաշտպանեց անվտանգ ապրելու իր իրավունքը եւ հաջողեց դրանում: Ադրբեջանը պատասխանատու է պատերազմ սկսելու եւ դրա բոլոր հետեւանքների համար:

Ադրբեջանի կողմից 1994-1995թթ. զինադադարի ռեժիմը խախտելու, չեղյալ համարելու բոլոր ճիգերը պետք է դատապարտվեն միջազգային հանրության կողմից:

Միջազգային հանրությունը պետք է հավելյալ ճիգեր գործադրի՝ վերսկսելու Արցախ-Ադրբեջան սահմանի երկայնքով զինադադարի պահպանումը:

Միաժամանակ շեշտում ենք, որ ԼՂՀ անվտանգության երաշխավորը, նախ եւ առաջ ԼՂՀ Պաշտպանության բանակն է ու հայ զինվորը:

ՀՀ Կատգամավորները մի շարք հարցադրումներ են ուղղել գործադիր մարմնին

Հունիսի 30-ին տեղի է ունեցել 6-րդ գումարման ԱԺ-ի 3-րդ նստաշրջանի եզրափակիչ լիազումար նիստը, որին հաջորդել է օրենսդիր-գործադիր հարցու-պատասխանի ընթացակարգը:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Ալյոնա Գաբրիելյանը հարց է ուղղել ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին կառավարության կողմից ստեղծված օպերատիվ շտաբի մասին. արդյոք այդ շտաբը գործում է եւ ի՞նչ աշխատանքներ է կատարում:

ԼՂՀ վարչապետ Արայիկ Յարուբյանը պատասխանելով պատգամավորի հարցին, նշել է, որ ներկայումս շտաբը գործում է ոչ ամենօրյա օրակարգով՝ ինչպես ապրիլյան օրերին, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա: Սակայն այն իրականացնում է եւ դեռ պետք է իրականացնի մի շարք աշխատանքներ, ինչպես նաեւ՝ ԼՂՀ ՊԲ-ի հետ համատեղ:

«Տարբեր կարծիքներ կան գումարների նպատակային օգտագործման մասին: Մինչեւ հունիսի 10-ը կառավարությունը փակ հաշվետվություն կներկայացնի հանրությանը: ԼՂՀ ԱԺ-ին այն կներկայացվի խորհրդակցության ձեւով: Մանրամասն հնարավոր չէ ներկայացնել՝ ռազմական անվտանգության հարցերից ելնելով, սակայն ԼՂՀ ԱԺ-ին կներկայացնենք վստահության մթնոլորտ ստեղծելու համար», - նշել է վարչապետը:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը օրենսդիր եւ գործադիր իշխանությունների միջեւ աշխատանքային փոխհարաբերությունների եւ ավելի մեծ վստահության եւ հարգանքի մթնոլորտ ձեւավորելու անհրաժեշտությանն ուղղված հարց է հնչեցրել:

«Դաշնակցություն» խմբակցության մեկ այլ անդամ Լեռնիկ Հովհաննիսյանը, ԼՂՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Սամվել Ավանեսյանին հարց է ուղղել Սոցիալական աջակցության հիմնադրամի՝ 2015 թվականի գործունեության վերաբերյալ:

Նախարարի խոսքով՝ Սոցիալական աջակցության հիմնադրամը գործում է 2015 հունիսի 1-ից եւ իրականացնում է մի շարք ծրագրեր՝ մասնավորապես գյուղաբնակ երիտասարդ ընտանիքներին աջակցություն տրամադրելու ծրագիրը, որից 2015 թվականին օգտվել են 44 ընտանիքներ, 2016-ին՝ 14-ը: Ծրագիրը դեռ շարունակվում է: Իրագործվում է նաեւ հիպոթեքային վարկերի սուբսիդավորման ծրագիր՝ տարբեր կարգավիճակներ ունեցող քաղաքացիների համար: Հիմնադրամի մանրամասն գործունեությունը նախարարը խոստացավ գրավոր ներկայացնել պատգամավորին:

Թե ի՞նչ արդյունքներ է տվել անցյալ տարի ԼՂՀ կառավարության կողմից նախաձեռնած լավարկման գործընթացը, ի՞նչ գումարների եւ հաշվարկների մասին է խոսքը, հարցադրել է ՀՀ Կատգամավոր Գեորգի Պետրոսյանը: Ի պատասխան՝ ԼՂՀ վարչապետ Արայիկ Յարուբյանը նշել է, որ ԼՂՀ կառավարությունը հաստիքների քանակի կրճատման մասին թվեր է ներկայացրել 2015 թվականի բյուջեի տնտեսումների մասում: Ինչ վերաբերում է 2016 թվականի տնտեսումներին, ապա պատրաստվում են 6 ամսվա արդյունքներն ամփոփելուց հետո բյուջեի փոփոխություններ կայացնել ԼՂՀ ԱԺ:

Պատասխանելով ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, «Դաշնակցություն» խմբակցության անդամ Վահրամ Բալայանի մտահոգությանը հացահատիկի գների անկման մասին՝ վարչապետը նշել է. «Մենք հեռուստատեսությամբ եւ անհատական հանդիպումների միջոցով բացատրել ենք քաղաքացիներին, թե ինչպիսի քաղաքականություն ենք իրականացնում 2016 թվականի բերքահավաքից ապահովելու համար: Բերքահավաքը կառավարելու համար: Բերքահավաքը մակարդակով: Ինչ վերաբերում է գնեցողին՝ շարունակելու ենք անցած տարվա քաղաքականությունը՝ մթերելով անհամեմատ ավելի բարձր գներով, քան ՅՅ-ում»:

ԱԺ լիազումար նիստի ընթացքում «Դաշնակցություն» խմբակցությունը գնահատական է տվել նաեւ կառավարության կողմից ԱԺ ներկայացված «ԼՂՀ 2015թ. Պետական բյուջեի կատարման մասին» հաշվետվությանը:

«Վերջին տարիներին ԼՂՀ կառավարությունը նպատակային աշխատանք է կատարում տնտեսական զարգացմանը նպաստող բարեփոխումների իրականացման ասպարեզում: Իրական քայլեր են կատարվում գործարարների եւ սպառողների իրավունքների ու շահերի համակողմանի պաշտպանման մասին, հարկային հաշվետվությունների կրճատման եւ պարզեցման, գործարարությանը զբաղվելու հետ առնչվող ընթացակարգերի պարզեցման, գյուղին եւ գյուղատնտեսությանը պետական աջակցության մեծացման ուղղությամբ: Պատահական չէ, որ 2015թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքը, նախորդ տարվա համեմատ, աճել է 12.9%-ի չափով:

Ողջունելի է այն փաստը, որ հարկային եկամուտները կատարվել են ճշտված տարեկան ծրագրի 100,4 %-ի չափով: Այդ ամենով հանդերձ՝ նկատելի են մի շարք բացթողումներ. ա/ Սեփական եկամուտները կազմել են 34 436 374,2 հազար դրամ կամ՝ տարվա ծրագրով նախատեսված մուտքերի մակարդակի 92.7 %-ը: բ/ 2015թ. ՀԱԿ-ի նկատմամբ պետական բյուջեի փաստացի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 16.4 %, այդ այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է 16.7 %:

գ/ Նախորդ տարվա համեմատ՝ այլ եկամուտների գծով պետական բյուջեի մուտքերը նվազել են 1.1 %-ով:

դ/ Ամեն տարի պետական բյուջեի եկամտային մասում նախատեսվում է պաշտոնական դրամաշնորհներ, սակայն համապատասխան մուտքեր չի ապահովվում: Նույնը կատարվել է նաեւ 2015թ., որը նույնպես ծախսով է: Կարծում ենք՝ ժամանակն է հրաժարվել նմանօրինակ անվստահելի եկամտի աղբյուրներից:

ե/ Պետք է համապատասխան աշխատանք կատարել՝ հարկերի գծով ապահովելու կրճատելու: 2015թ. այն կազմել է 2 209 795,1 հազար դրամ:

զ/ Պետական բյուջեի ծախսային մասով անհրաժեշտ է իրատեսություն պահպանելու: Բազմաթիվ ուղղություններով առկա է թերֆինանսավորման փաստեր: Այդ պատճառով ԼՂՀ 2015թ. պետական բյուջեի ծախսերում նախատեսված 260 ծրագրերից հարյուր տոկոս կատարողական է ապահովվել 36 ծրագրում:

Այդ ամենով հանդերձ՝ պետք է նկատենք, որ մի շարք ասպարեզներում, նախորդ տարվա համեմատ, ծախսերի աճ է նկատվել, օրինակ՝ կրթության ասպարեզում 8,8 %, սոցիալական պաշտպանության ոլորտում՝ 8,9 %, որը դրական ենք համարում եւ հորդորում ենք կառավարությանը՝ միջոցներ որոնել նոր եկամտի աղբյուրներ հայթայթելու համար:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել նոր աշխատատեղերի ստեղծման, երիտասարդության զբաղվածության հարցերին:

«Դաշնակցություն» խմբակցությունը դրական է գնահատում կառավարության կողմից ներկայացված «ԼՂՀ 2015թ. Պետական բյուջեի կատարման մասին» հաշվետվությունը:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

ԼՂՀ փոխվարչապետն այցելել էր ԱՄՆ



Մեկ տարի առաջ ԼՂՀ Կառավարությունը եւ Հայ օգնության միությունը ծրագրել են Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի նորակառույց շենքի շինարարությունը: Այդ ծրագրի շրջանակներում ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, գտնվելով ԱՄՆ-ում, մասնակցել է այնտեղ կազմակերպված մի շարք դրամահավաք միջոցառումների:

հետ գրույցում ասել է Արթուր Աղաբեկյանը. «Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի շենքն իր տեսակով բացառիկ է լինելու ԼՂՀ տարածքում, գո՛րցե նաեւ՝ ՀՀ տարածքում, եւ այդ ծրագիրը մոտ 1 միլիոն դոլարից ավելի ծրագիր է, որը պետք է կյանքի կոչվի 2016 թ. եւ 2017 թ. առաջին կիսամյակի ընթացքում»:

Աշխարհի 25 երկրներում գործող ՀՕՄ-ի կառույցները եւ Կենտրոնական վարչությունը կազմակերպում են տարբեր դրամահավաք միջոցառումներ, որոնց շնորհիվ այսօր ընթանում են մանկապարտեզի շինարարական աշխատանքները:

«ԱՄՆ Արեւմտյան շրջանի ՀՕՄ-ի կառույցի նախաձեռնությամբ Գլենդեյլ քաղաքում կազմակերպվել է մեծ դրամահավաք միջոցառում, որի շրջանակներում ԱՄՆ Արեւմտյան շրջանը պետք է իր խոստացած գումարի չափը տրամադրի ՀՕՄ-ի Կենտրոնական վարչությանը՝ մանկապարտեզի շինարարությունը կազմակերպելու նպատակով», - նշել է Ա. Աղաբեկյանը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումների ժամանակ Ա. Աղաբեկյանը մոտ 700 հոմոսիկներին, ՀՕՄ-ին սատար անձանց եւ կազմակերպություններին ներկայացրել է Արցախում տիրող սոցիալական վիճակը, ապ-

րիլյան քառօրյա պատերազմական գործողություններից հետո վերականգնողական շրջանը, խոսել՝ Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի շինարարության ծրագրի կարիքադրության մասին:

«Հավաստիացնում եմ, որ ծրագիրը հաջողությամբ է պսակվելու: Ես խոսել եմ Արեւմտյան շրջանի կառույցի ՀՕՄ-ուհիների հետ եւ ուրախությամբ կարող եմ տեղեկացնել, որ արդեն ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ գույքի եւ խաղահրապարակների մասով, եւ խոստացված ժամանակաշրջանում՝ 2017 թվականի առաջին կիսամյա- կում մենք ամբողջությամբ պետք է ավարտենք շինարարությունը», - ասել է փոխվարչապետը:

Ա. Աղաբեկյանի խոսքով՝ ծրագիրն ընթանում է սահմանված ժամանակացույցին համապատասխան, եւ ակնկալվում է, որ «Սոսե» մանկապարտեզի սաները 2017թ. սեպտեմբերից կհաճախեն նորակառույց մանկապարտեզ:

«Ակնկալում ենք, որ ՀՕՄ-ի բոլոր կառույցներն իրենց խոստացած գումարները ժամանակին տրամադրելու են ՀՕՄ-ի Կենտրոնական վարչությանը, որպեսզի հնարավոր լինի ծրագիրն ավարտել ժամանակին», - շեշտել է նա:

Այցի շրջանակներում Արթուր Աղաբեկյանը հանդիպել է նաեւ Արցախի բարեկամներ-բարերարների հետ, ովքեր

տասնյակ տարիներ իրենց ներդրումներն են բերում Արցախի զարգացմանը:

Հերոս եւ Անահիտ Զաքերյաններին եւ ժանեթ Սիրոյանին Ա. Աղաբեկյանը հանձնել է «ԼՂՀ վարչապետի երախտագիտության հուշամեդալ»: Առանձին անհատների հետ քննարկել է նաեւ հետագա համագործակցության մի շարք ծրագրեր:

«Օգտվելով առիթից՝ ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել մեզ աջակից բոլոր այն հայրենակիցներին, ովքեր ոչ միայն հիմա, այլ ընդհանրապես իրենց ապրած կյանքով են ապացուցում, որ իրենք ընդմիջում մնալու են ԼՂՀ բարեկամներն ու աջակիցները: Իմ անձնական շնորհակալությունն եմ ուզում հայտնել հատկապես ժամանակահատվածի ընթացքում Բունիաթյանին» - հավելել է Ա. Աղաբեկյանը:

«Ուզում եմ շեշտել, որ այս ծրագրից անմասն չի մնացել եւ չի մնալու նաեւ ԼՂՀ Կառավարությունը: Այն իր մասնակցությունն է բերելու թե՛ գումարի, թե՛ աշխատանքների կազմակերպման մասով՝ մինչեւ գործը ավարտին հասնելը», - եզրափակել է փոխվարչապետը:

Հիշեցնենք, որ Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի նորակառույց շենքի նախագծման պատվիրատուներն են ԼՂՀ Կառավարությունը եւ ԼՂՀ քաղաքաշինության նախարարությունը:

Հրոյցը՝ Լուսինե ԹԵՎՈՅՅԱՆԻ

ՀՀ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակն Արցախի հզոր թիկունքն է. Արզիկ Մխիթարյան



Հունիսի 7-10-ը Արցախի Հանրապետության նախագահի գլխավորած պատվիրակությունը, ՀՀ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի նախաձեռնությամբ, աշխատանքային այցով ժամանել էր Բելգիա: Բելգիայում նախագահի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել տարբեր քաղաքական եւ ակադեմիական շրջանակների հետ: Բելգիայի հանդիպումների եւ ապագա ակնկալիքների մասին «Ապառաժ»-ը գրուցել է ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արզիկ Մխիթարյանի հետ:

- Բելգիայի հանդիպումներն ինչպիսիք են քննարկում եւ ի՞նչ ակնկալիքներ կարող ենք ունենալ այդ հանդիպումներից:
 - Բելգիայի Միացյալ Թագավորությունը մեզ համար անձանոթ չէ, քանի որ մեր այցելությունը նախորդեց Բելգիայի խորհրդարանի պատգամավորների՝ Արցախի այցելությանը: Երկու-երեք անգամ տարբեր առիթներով այցելել էին մեզ: Մեր այցելությունը տեւեց 3 աշխատանքային օր՝ խիստ հագեցված օրակարգով:

Հունիսի 8-ին պատվիրակությունը հանդիպում է ունեցել Բելգիայի խորհրդարանում Հայաստանի հետ բարեկամության խմբի ղեկավար Էլս Վան Յոնին եւ մի խումբ պատգամավորների հետ: Հանդիպմանը քննարկվել են Բելգիայի եւ Արցախի խորհրդարանների միջեւ կապերի զարգացմանն առնչվող հարցեր: Նույն օրը այցելել ենք նաեւ Բրյուսելում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, որտեղ հանդիպում ենք ունեցել արտակարգ եւ լիազոր դեսպան Թաթևիկ Մարգարյանի եւ դեսպանության աշխատակիցների հետ՝ արծարծելով Եվրոպական տարբեր կառույցներում հայկական երկու հանրապետությունների փոխգործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

Հունիսի 9-ին հանդիպել ենք Բրյուսելի Ֆլամանական խորհրդարանի մի խումբ պատգամավորների հետ՝ խորհրդարանի նախագահ Յան Պյունմանսի գլխավորությամբ:
 Հունիսի 10-ին Բրյուսելի ֆրանկոֆոն խորհրդարանում հանդիպում ենք ունեցել մի խումբ պատգամավորների հետ՝ խորհրդարանի նախագահ ժուլի դե Գրոտի գլխավորությամբ:
 Հանդիպումներին մասնակից բոլոր պատգամավորներն ու քաղաքական գործիչները բավականին տեղեկացված էին մեր երկրի մասին եւ հետաքրքիր հարցադրումներով էին հանդես գալիս: Մեր առաքելությունը նոր տեղեկություններ հայտնելն էր նաեւ այն պատգամավորներին, ովքեր չեն եղել մեր տարածաշրջանում եւ պատկերացում չուներին Հարաբարյան խնդրի մասին:

Հունիսի 10-ին «Fondation Universitaire» կազմակերպությունում հանդիպում ենք ունեցել Բելգիայի ակադեմիական շրջանակների հետ:

Հունիսի 10-ին «Fondation Universitaire» կազմակերպությունում հանդիպում ենք ունեցել Բելգիայի ակադեմիական շրջանակների հետ:

Հունիսի 10-ին «Fondation Universitaire» կազմակերպությունում հանդիպում ենք ունեցել Բելգիայի ակադեմիական շրջանակների հետ:

Նախագահն անդրադարձել է Արցախի պետականաշինությանը, ներքին եւ արտաքին քաղաքականությանը, ադրբեջանա-դարաբարյան հակամարտության կարգավորմանը, ապրիլի 2-5-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմական գործողություններին ու դրանց հետեւանքներին, տարածաշրջանային գործընթացներին, պատասխանել՝ բարձրացված հարցերին:

- Ի՞նչ քաղաքական հեռանկարներ եք տեսնում Եվրոպայում ԼՂ հիմնահարցի եւ Արցախի ճանաչմանն ուղղված:

- Հանրահայտ ժողովրդական ճշմարտությունն է, որ կաթիլը քար է ծակում: Մենք այդպես՝ կաթիլ - կաթիլ մեր ամենօրյա համառ գործունեությամբ կարող ենք իրենց հասցնել մեր պահանջը՝ ինքնորոշված եւ ազատ ապրելու մեր իրավունքը:

Այսօր աշխարհաքաղաքական իրադարձություններն այնպիսին են, որ եվրոպացիները նույնպես բախվում են դժվարությունների հետ՝ կապված Սիրիայի իրադարձությունների, Թուրքիայի քաղաքական դիրքորոշման հետ եւ այլն:

Նրանք եւս հասկանում են, որ կան ազգային հիմնախնդիրներ, որոնց լուծում տալ է պետք եւ չէին թաքցնում իրենց վերաբերմունքը: Մենք այնտեղ զգացինք, որ կան նաեւ մարդիկ, ովքեր ունեն ազդեցիկ տրամադրվածություն: Երբ հանդիպում ունեցանք ակադեմիական շրջանակի հետ, ներկա էր մեկը, ով փորձեց հակադարձել մեզ եւ նշել այն հանգամանքը, որ ինքնորոշումը ՄԱԿ-ի ընդունած բանաձեւերից է, որը վերաբերում է ավելի շատ գաղութային երկրներին, ոչ թե մեզ նման պետությանը: Նա արժանի պատասխան ստացավ, որից հետո զգաց, որ անելիք չունի եւ հեռացավ դա հիլիճից:

Այդ հանդիպումներն անհրաժեշտ եւ

արդյունավետ են, տալիս են եւ դեռ կտան իրենց արդյունքները:

- Հանդիպումների նախաձեռնությունը ՀՀ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի կողմից էր: Ընդհանրապես, ինչպե՞ս եք գնահատում Եվրոպայի Հայ Դատի աշխատանքներն Արցախի Հանրապետության ճանաչման, Արցախի հիմնահարցի՝ Եվրոպայում ներկայացման առումով եւ որքանով է հաջողվում համագործակցել:

- Բելգիայում բոլոր հանդիպումների ժամանակ մեր պատվիրակությանն ուղեկցում էր ՀՀ Եվրոպայի Եվրոպայի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանը: Հայ Դատը հսկայական աշխատանք է կատարում ոչ միայն Բելգիայում, այլեւ՝ ամբողջ Եվրոպայում: Մենք հիացած ենք նրանց կատարած աշխատանքով: Ինչպես վերը նշեցի՝ կաթիլը քար է ծակում: Նրանք, ի դեմս Գասպար Կարապետյանի, եւս այդպիսի աշխատանք են կատարում՝ ցույց տալով, որ աշխարհում ապրում է մի ժողովուրդ, որը ճանաչման կարիք ունի եւ պետք է ունենա նույն իրավունքները, ինչպես աշխարհի մյուս ժողովուրդները: Նրանք Եվրոպայի սրտում՝ Բրյուսելում տեղակայված մի փոքրիկ գրասենյակում, հսկայածավալ աշխատանքներ են կատարում:

Մենք դեռ չէինք հասել այստեղ, երբ Գասպար Կարապետյանն արդեն ֆրանսիայում կատարում էր իր աշխատանքը, դեռ չէինք հասել այստեղ, նա արդեն Բելգիայից պատվիրակ էր բերում Արցախ:

Պատմական բոլոր փաստերից գիտենք, թե ՀՀ Եվրոպայի ինչպիսի գործունեություն է վարում, բայց այն, ինչ որ մենք տեսանք մեր աչքերով, զգացինք, վկայում է, որ մենք մենակ չենք այս աշխարհում: Արցախը հզոր թիկունք ունի:

«ԱՊՍՈՒՄ»

ՀՀ Եվրոպայի Հայ Դատի հանձնախումբը հանդիպել է Բելգիայում Գերմանիայի դեսպանի հետ



Հունիսի 27-ին ՀՀ Եվրոպայի եւ Բելգիայի Հայ Դատի հանձնախմբերից կազմված միացյալ պատվիրակությունը, որում ընդգրկված էին ՀՀ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանը, ՀՀ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի գրասենյակի հարդրակցության պատասխանատու Պետո Ղեմիրճյանը, ՀՀ Բելգիայի Հայ Դատի հանձնախմբի ատենապետ Լիաննա Մարգարյանը եւ քարտուղար Աշխեն Ֆիքսովայը, այցելել են Գերմանիայի դեսպանատուն եւ հանդիպել Բելգիայում Գերմանիայի դեսպանի հետ:

Գերմանիայի դեսպանի հետ:

Այցի հիմնական նպատակն էր՝ Բուրգերսթադի կողմից Հայոց ցեղասպանության բանաձեւի որդեգրման առիթով գնահատանքի խոսք փոխանցել Գերմանիայի ժողովրդին: Դեսպանը շնորհակալություն է հայտնել այցի համար եւ նշել, որ այդ բանաձեւը միտում ունի նաեւ ընդունելու Գերմանիայի մեղսակցությունը եւ նպատակ ունի ծառայելու Թուրքիայի կողմից սեփական պատմության հետ առերեսմանը:

Հանդիպման ընթացքում խոսվել է նաեւ Լեռնային Ղարաբաղ-Արցախի հիմնախնդրի խաղաղ կարգավորման մասին՝ նկատի առնելով, որ Գերմանիան եւս ԵԱՀԿ նախագահող երկիր է:

Դեսպանը հաստատել է, որ Գերմանիան կառչած կմնա ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ համանախագահության աշխատանքներին:

Արժարժվել են նաեւ հայությանն ու Հայաստանին վերաբերող մի շարք այլ հարցեր:

«ԱՊՍՈՒՄ»

ՀԱՅ Դատի հանձնախումբը ԱՄՆ-ին հորդորել է 5 մլն դոլար տրամադրել Արցախին



ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի ենթահանձնաժողովը կքննարկի ԱՄՆ 2017 թվականի ֆինսկալ տարվա բյուջեի նախագիծը, որում կնախանշվեն արտաքին օգնության առաջնահերթությունները: Հայ Դատի ԱՄՆ հանձնախումբը հորդորել է 2017 թվականի ֆինսկալ տարվա շրջանակում Լեռնային Ղարաբաղին տրամադրել 5 մլն ԱՄՆ դոլարի օգնություն:

Մասնավորապես՝ հանձնախմբից նշել են, որ այդ գումարը կներդրվի մարդասիրական եւ զարգացման ծրագրերի իրականացմանը, այդ թվում՝ Լեդի Ջոք-

սի վերականգնողական կենտրոնի ընդլայնումն ու մոդեռնիզացիան, տարածաշրջանային կլիմայական ծառայությունները, որոնք կծառայեն ֆիզիկական ու մտավոր արատներ ունեցող երեխաներին ու մեծահասակներին:

Հայ Դատի հանձնախմբի անդամները կոչ են արել գրոյացնել Ադրբեջանին տրամադրվող ռազմական աջակցությունը, քանի դեռ այդ երկրի ղեկավարները չեն համաձայնել Ռոյս-Էնգել առաջարկներին: Այն է՝ սահմանից հետ քաշել դիպլոկահարներին ու ծանր զրա-հատեխնիկական, ավելացրել ԵԱՀԿ դիտորդների թիվը, կանգնեցնել իրադարձարի ռեժիմի խախտումներն արձանագրող համակարգ:

Հանձնախմբից առաջարկել են Հայաստանին տրամադրել 40 մլն ԱՄՆ դոլար, որն ուղղված կլինի հայ-ամերիկյան առեւտրային եւ ներդրումային հարաբերությունների աճին: Բացի այդ, հանձնախումբն առաջարկել է Հայաստանին տրամադրել եւս 10 մլն ԱՄՆ դոլար՝ օգնելու տեղավորել Սիրիայից ու Մերձավոր Արեւելքի այլ շրջաններից եկած շուրջ 20 հազար փախստականներին:

Սեփ. ԼՐԱՍՎՈՒԹՅՈՒՆ

Որպես զսպման միջոց՝ մեծ դեր ունի հայկական կողմի ռազմական ներուժը. Սերգեյ Մինասյան



Հունիսի 27-ին Ստեփանակերտում տեղի է ունեցել քաղաքագետ, Կովկասի ինստիտուտի տնօրեն Սերգեյ Մինասյանի գրքի շնորհանդեսը:

«Չսպումը դարաբաղյան հակամարտության մեջ» վերնագրով գիրքը վերլուծություն է ընդհանուր ռազմական զսպման, դիվանագիտական և քաղաքական ճանապարհով զսպման հիմնային տեսական սկզբունքների մասին՝ դիտարկելով նաև դրա գործնական դրսևորման հնարավորությունները ԼՂ հակամարտության պայմաններում:

Շնորհանդեսին ներկա էին ԼՂՀ ինչպես քաղաքական, այնպես էլ հասարակական գործիչներ, լրագրողներ:

Ներկա էին նաև ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամներ Լեռնիկ Յովհաննիսյանը և Այրշա Գաբրիելյանը:

«Արտաքին քաղաքականության և

անվտանգության հարցերով հանրային խորհուրդ» վերլուծական կենտրոնի ղեկավար Մասիս Մայիլյանը ներկայացրեց գիրքը և նրա ներդրումը քաղաքագիտության և գործնական քաղաքականության մեջ:

Շնորհանդեսը վարում էր Կովկասի ինստիտուտի տնօրեն, գրքի խմբագիր Ալեքսանդր Իսկանդարյանը:

«Իլիամ Ալիեի վերջին հայտարարության մեջ արտահայտած այն միտքը, որ կարգավիճակը կարող է լինել միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության տեսանկյունից, բացառեց հայկական կողմից որևէ զիջում կամ փոխզիջում: Այս պահին դա տեսականորեն անհնար է», - այն հարցին, թե արդյո՞ք հնարավոր է վերջին՝ Վիեննայի և Պետերբուրգյան հանդիպումներից հետո լինի որևէ փոխզիջումային տարբերակ, «Ապառաժ»-ի հետ զրույցում պատասխանել է քաղաքագետ Սերգեյ Մինասյանը:

Քաղաքագետը շեշտել է, որ որևէ փոխզիջում չի կարող լինել այն պարագայում, երբ Ադրբեջանը սպառում է զիջումների միայն մեր կողմից՝ թե՛ տարածքային, թե՛ կարգավիճակի առումներով: Յտուեաբար, այս պահին ադրբեջանցիները վստահության մեխանիզմների շուրջ մոնիթորինգների միսիային որոշ չափով համաձայնեցին, բայց շատ շուտ պետք է ընդունեն քաղաքական որոշում: Քաղաքական որոշումն այն է, թե արդյո՞ք ադրբեջանցիները համաձայնության են գալիս ապրիլյան իրադարձություններից հետո, թե՛ ոչ:

«Մի՞գուցե սպասվող՝ Փարիզի հանդիպումից հետո ադրբեջանցիները պիտի «մերվեն», որ այս բանակցային գործընթացն անվերջ շարունակվելու է, որովհետև կողմերը մոտիկ չեն որևէ փոխզիջումների և առաջխաղացման. կամ էլ պետք է գնան նոր էսկալացիայի՝ մտածելով, որ նոր էսկալացիան կամ լայնամասշտաբ նոր պատերազմը, կամ էլ պատերազմի վտանգը կարող են ստիպել հայկական կողմին՝ գնալ միակողմանի զիջումների: Ես հուսով եմ, որ ադրբեջանական կողմն այս անգամ ավելի իրատես կլինի և կընտրի առաջին տարբերակը», - նշել է քաղաքագետը:

Մինասյանը, անդրադառնալով Ադրբեջանի աշխատակազմի ղեկավարի՝ Սանկտ Պետերբուրգում նախագահների հանդիպումից հետո արված այն հայտարարությանը, որ հանդիպման ընթացքում հայկական կողմի հետ ձեռք է բերվել տարածքների հանձման փուլային տարբերակ, նշել է, որ այս պահին դա հնարավոր չի համարում:

Ըստ Մինասյանի՝ Պետերբուրգյան հանդիպման ժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի դիտորդների թվի ավելացման շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունը ֆորմալ բնույթ է կրում: Նրա կարծիքով՝ դա անվտանգության երաշխիք լինել չի կարող, սակայն ֆորմալ ձևով գոնե համանախագահներին կամ միջազգային հանրությանը հնարավորություն կտա ասելու, որ որոշ առաջխաղացում կա:

Յետաքնության հատուկ մեխանիզմների կիրառումն առանց ադրբեջանա-

կան կողմի համաձայնության՝ քաղաքագետը հնարավոր չի համարում. «Դա ունի սիմվոլիկ նշանակություն, որովհետև որպես զսպման միջոց՝ ավելի մեծ դեր են խաղում հայկական կողմի ռազմական ներուժը կամ որոշ չափով կարելի էր աշխարհագրական դերակատարները՝ Ռուսաստան-Ֆրանսիա կամ Եվրոմիություն»:

Սանկտպետերբուրգյան հանդիպումից հետո ադրբեջանական կողմը, մասնավորապես՝ Ադրբեջանի նախագահը և նախագահական ապարատը բավականին ակտիվ էին: Հայկական կողմից այդպիսի ակտիվություն չնկատվեց, բացառությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հայտարարությանը, որը փաստորեն հերքեց, որ կողմերը Պետերբուրգում որևէ տարածքային զիջման համաձայնության են եկել:

Հանդիպումից անմիջապես հետո հաջորդեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցը ԼՂՀ հարավային սահման:

Մինասյանի խոսքերով՝ ՀՀ նախագահի այցն Արցախ իր մեջ մեծ էր պարունակում. «Նա այցելեց ԼՂՀ հարավային սահման՝ ցույց տալու, որ պատրաստ ենք պատերազմի, եթե դրա անհրաժեշտությունը լինի: Ադրբեջանի նպատակն է՝ հանրությանը ցույց տալ, որ իրենք մի բան անում են: Մեր նպատակը պետք է լինի՝ առանց հայտարարությունների պատրաստվել նոր հնարավոր պատերազմի, և ինչքան ավելի պատրաստ լինենք, այնքանով իսկ կբացառվի պատերազմի վերսկսումը»:

Հրույց՝ Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Արցախի օմբուդսմենը ՀՀԴ հրավերով այցելել է Բելգիա



ՀՀ Դաշնակցության Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի հրավերով Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը հունիսի 26-ից աշխատանքային այցով գտն-

վում է Բելգիայի մայրաքաղաքում:

Ռ.Մելիքյանը մի շարք աշխատանքային հանդիպումներ է ունեցել Եվրոպական խորհրդարանի պատգամավորների և աշխատակազմի ներկայացուցիչների, ինչպես նաև Ֆլամանդական օմբուդսմեն Բարթ Վիկերսի (հունիսի 28-ին) և ֆրանսախոս համայնքի ու Վալոնիայի օմբուդսմեն Մարկ Բերտրանի հետ (հունիսի 29-ին):

Բելգիայի երկու հիմնական մարզերը և լեզվական համայնքները ներկայացնող օմբուդսմենների հետ հանդիպումների ընթացքում Ռ.Մելիքյանը նշել է, որ Օմբուդսմենի ինստիտուտը, լինելով սահմանադրական նոր կառույց, ունենալով ընդգծված ապաքաղաքական բնույթ, օժտված է մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման, դրանք խախտումների կանխարգելման և արդյունավետ վերացման, առհասարակ՝ հանրային

արժեքների հավասարակշռման լայն գործիքակազմով ու մեծ ներուժով, որը կարող է լիարժեքորեն կենսագործվել միայն քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ սերտ փոխգործակցության պայմաններում:

Արցախի օմբուդսմենը բելգիացի գործընկերներին համառոտ ներկայացրել է մարդու իրավունքների պաշտպանի արցախյան ինստիտուտի կայացման ուղին, իրավական վիճակը, առաջնահերթությունները, պաշտպանի և աշխատակազմի առջև կանգնած խնդիրները: Ֆլամանդական օմբուդսմենը, ներկայացնելով իր ղեկավարած կառույցի փորձը, հատկապես կարելի է օմբուդսմենի միջնորդական ու հաշտարար գործառույթը, ինչպես նաև հանրային իշխանության լիազորությունների ու վարչական ընթացակարգերի մասին «թեժ գծի» միջոցով քաղաքացիներին իրազեկելու հա-


մակարգը:

Հանդիպումների վերջում Արցախի օմբուդսմենը ընդգծել է գործընկերների միջև շփումներ հաստատելու և պահպանելու կարևորությունը՝ կուտակված դրական փորձի փոխանակման և տեղայնացման նպատակով: Ռ.Մելիքյանը մասնավորապես նշել է, որ իր աշխատակազմին հանձնարարելու է ուսումնասիրել «թեժ գծի» կազմակերպման ֆլամանդական մոդելը՝ Արցախում դրա ներդրման հնարավորությունը գնահատելու նպատակով:

Եվրոպացի գործընկերների հետ հանդիպումներին Արցախի օմբուդսմենին ուղեկցել են Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի ղեկավար Գասպար Կարապետյանը, հանձնախմբի աշխատակիցներ Պետո Դեմիրճյանը, Յեդինե Էվիլյանը և Աշխեն Ֆիքսովան:

«ԱՊՈՍՏՈՍ»

Առանց բանակցություններում Արցախի լիարժեք մասնակցության՝ լուրջ առաջընթաց անհնար է. Կարեն Միրզոյան



The Office of the RAR V.D.

Առանց բանակցային գործընթացում Լեռնային Ղարաբաղի լիարժեք մասնակցության՝ անհնար է լուրջ առաջընթաց գրանցել: Այս մասին հունիսի 30-ին՝ Երեւանում ԵԱՀԿ գործող նախագահ Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերի և ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հանդիպման ավարտին լրագրողներին ասել է ԼՂՀ ԱԳ նախարար Կարեն Միրզոյանը:

Անդրադառնալով հարցին, թե հանդիպմանը քննարկվե՞լ է արդյոք բանակցային գործընթացին Ղարաբաղի մասնակցությունը՝ նախարարը պատասխանեց. «Դա այն կետն է, որի մասին մենք

միշտ խոսում ենք: Դա մեր պաշտոնական դիրքորոշումն է, այն ոչ միայն Ղարաբաղյան կողմի պահանջը, այլև՝ օբյեկտիվ իրականություն: Այսօր առանց բանակցային գործընթացում Լեռնային Ղարաբաղի լիարժեք մասնակցության, անհնար է լուրջ առաջընթաց գրանցել»:

Նրա խոսքով՝ այդ տեսակետը ԵԱՀԿ-ի համար նորություն չէ: «Մենք նորից ենք այն ներկայացրել, և դա հաշվի է առնվել: Մենք նաև խոսել ենք այն մասին, որ անկախ բանակցային գործընթացում ստեղծված իրավիճակից, անկախ այն հանգամանքից, թե ստատուս քվոն պահպանվում է, թե ոչ՝ կան Ղարաբաղի ժո-

ղովրդի հումանիտար կարիքները, որոնք պետք է բավարարվեն: ԵԱՀԿ-ն, որպես լրջագույն միջազգային կառույց, որի գործառույթների մեջ է մտնում նաև նրա տարածքում ապրող ժողովուրդների հումանիտար հարցերը, պետք է քայլեր ձեռնարկի այդ ուղղությամբ: Խոսքը մասնավորապես այն մասին է, որ շրջափակման պատճառով ոտնահարվում են Արցախի ժողովրդի իրավունքները՝ կրթության, ազատ տեղաշարժի և մի շարք այլ իրավունքներ: Այդ ուղղությամբ ԵԱՀԿ-ն նույնպես կարող է դեր խաղալ», - ասել է նախարարը:

Սեփ. ԼՐԱՍՎՈՒԹՅՈՒՆ

Թալիշ. անորոշ ապագա եւ դասեր, որ պիտի քաղենք...



Թալիշ չհասած՝ մեքենայի անիվը պայթում է: Գյուղ ոտքով ենք բարձրանում, վարորդը հետ է դառնում՝ օգնություն կանչելու:

Անիվը պատահական չէ փչացել: 130 ընտանիք ունեցող Թալիշն այս օրերին դատարկ է. մեքենայի ձայնը կխախտեր գյուղում թագավորող լռությունը:

Դժվար է եւ անսովոր տեսնել Թալիշն այդպիսին: Թալիշ առաջին անգամ այցելել էի Ամանորի նախաշեմին: Անբացատրելի հպարտություն էի գգացել այդ մարդկանց համար, որովհետեւ նրանց ականջներում ամեն օր նույն ձայնն էր՝ պատերազմի ձայնը, որին կես վախով ու կես ցավով, բայց նաեւ արհամարհանքով էին վերաբերում: Դա էր ապացուցում այն, որ բոլոր տներում, դպրոցում, մանկապարտեզում տոնածառեր էին եւ նախատոնական տրամադրություն: Միաժամանակ, նաեւ մի անբացատրելի փայլ կար նրանց աչքերում, հատկապես՝ երեխաների, ինչպիսին լինում է հուսառատ ու սպասող հայացքներում: Հույս, որ գալիք տարի գուցե լռեն կրակոցները եւ իրենցից քիչ հեռու՝ սահմանին կանգնած զինվորի կյանքն այլեւս վտանգված չլինի: Խաղաղության հույսն էր, որ տեսա բոլորի աչքերում...

Հեռվում երեւում է մանկապարտեզի կլոր-քառակուսի շենքը: Այն ժամանակ գրել էի մանկապարտեզի խնդիրների մասին՝ երեխաների թիվը մեծ էր, իսկ խաղասեղանին ու ննջասեղանին՝ փոքր, խաղալիքները հին էին, մաշված, ջուր չկար, պահեստային սեղան չկար: Այդ առեղծվածային շինությունն ուներ միայն մեկ առավելություն՝ մանկապարտեզ էին հաճախում 25 երեխա, 9 աշխատող, երկու բառով ասած՝ կյանք կար...

Շենքի 2-3 աստիճաններով բարձրանալը դժվար է: Կանգնում եմ մուտքում. տեսարանը ծանր է: Կլոր-քառակուսի շենքն ուներ մի մուտք, հիմա՝ ռմբակոծության արդյունքում, շենքի գրեթե բոլոր կողմերից հնարավոր է մտնել մանկապարտեզ... Ամեն ինչ տակնուվրա է, ակամայից ուզում եմ ետ իրենց տեղը կախել դարակները, շարել այստեղ-այնտեղ թափված խաղալիքները, կացնել պատից պոկվող պաստառները, տեսերեն ու գունավոր մատիտները դնել տեղը... Պատերազմը ներխուժեց այստեղ ու, թվում է, տեր դարձավ: Բայց մի բան կա պատերազմից ուժեղ. դա իրերն են, որոնք հուշում են նրանց իսկական տերերի մասին... Ոչ ոք չի կարող այդ տերերից խլել իրենց իրերը՝ իրենց մանկությունը. նրանք պիտի հետ գան. հետ են գալու, եթե...

Մանկապարտեզին հաջորդող շենքը գյուղի հարսանյանց սրահն է: Բնակիչներից շատերի հարսանիքներն ու ուրախություններն այստեղ են անցել: Հիմա սրահից գրեթե ոչինչ չի մնացել: Առաստաղը ամողջությամբ ավերվել է՝ շարժելով բոլոր սեղան-աթոռները: Չգիտեմ՝ հաջորդ

անգամ ե՞րբ այս սրահից կհնչի ուրախության մեղեդի:

Արեւը շողում է: Զայլում եմ դեպի գյուղի վերելի հատվածը, որտեղ դպրոցն է՝ գյուղի ամենավտանգավոր հատվածը:

Դեկտեմբերին, երբ եկա, Թալիշի դպրոցի տնօրեն Տանյա Միժուկը կես-կատակ, կես-լուրջ ասաց, որ քանի սահմանը հանգիստ է՝ աշխատում են արագ փակել աշակերտների քառորդները... Այս անգամ դպրոցի տնօրենը չհասցրեց փակել քառորդները... Հիմա դպրոցից անգն աչքով կարելի է տեսնել թշնամու դիրքերը: Չէ, դրանք նրանց չէին, մերն էին, ապրիլին գրավեցին, այդ պատճառով դպրոցում վերջին գանգ չի հնչել: Այս տարի Թալիշի ավարտական դասարանի աշակերտների վերջին գանգը հնչել է այստեղ-այնտեղ...

Դպրոցի պատից կախված է առաջադիմություն ցուցաբերած երեխաների լուսանկարները: Լուսանկարներում պատկերված երեխաների մեջ փնտրում եմ ծանոթ հայացք, փորձում եմ վերհիշել Նոր տարվա հանդեսը: Այստեղ տոնածառն էր, որի շուրջ բոլորը հավաքվել էին, բոլորը՝ սիրուն շորերով, ուրախ, բոլորը՝ հրաշքի սպասումով: Այդ օրը շատ զարմացա. երեխաներից շատերը, ցավոք, չէին հավատում Ձմեռ պապիկին եւ ամանորյա հրաշքին: Սակայն բոլորի շուրթերից հնչում էր միայն մեկ ցանկություն՝ խաղաղություն...

«Ձմեռ պապիկից, մի քանի տարի է, խնդրում եմ, որ երազանքս իրականություն դարձնի: Ուզածս խաղաղություն է, ինձ ուրիշ ոչ մի բան պետք չէ: Բայց երեւի խաղաղությունը շատ թանկ գին ունի, եւ եթե Ձմեռ պապիկն ամենակարող լիներ՝ այն կբերեր...»,- այս խոսքերն է ասել 5-րդ դասարանում սովորող Անին:

Այսօր Ստեփանակերտի հյուրանոցներում ապաստանած փոքրիկների ոչ փոքրիկ երազանքները չեն փոխվել:

7-ամյա Գոռի հետ ծանոթացել էի Նոր տարվա հանդեսի ժամանակ: Այն ժամանակ՝ հարցիս, թե ի՞նչ է ուզում, որ Ձմեռ պապիկը բերի, նա պատասխանել էր, որ ավտոմատ է ուզում, որպեսզի՝ եթե թուրքերը գան, պաշտպանվի: Այսօր Գոռի երազանքը նույնն է՝ նա հպարտ-հպարտ կեցվածքով ավտոմատ է ուզում, բայց այս անգամ ոչ թե թուրքին պատասխան կրակ բացելու, այլ՝ մեր դիրքերն ու Թալիշը՝ իր տունը, իր մանկությունը հետ վերադարձնելու, որովհետեւ՝ քանի դեռ այդ դիրքերը թշնամու ձեռքին են, Գոռն ու իր ընկերները չեն կարողանալու վերադառնալ իրենց գյուղը, իրենց տունը, իրենց դպրոցը... /Ախր ինչո՞ւ չեմ տեսնակարել հանդեսը, ինչո՞ւ բոլորին մեկ առ մեկ չեմ նկարել, ինչո՞ւ այն ժամանակ ավելի շատ չմնացի այդ դպրոցում/:

Երկրորդ հարկ բարձրանալ չեմ կարողանում. ցավը խորն էր, տեսածս՝ չափազանց շատ...

Ակամայից գայրանում եմ՝ հիշելով, որ

այսօր կան մարդիկ, ովքեր խոսում են Թալիշի՝ գրավյալ դիրքերի «ոչ ստրատեգիական» լինելու մասին: Դե, ուրեմն՝ եթե այդ դիրքերը ոչ ստրատեգիական են, վերցրեք ձեր ընտանիքները եւ տեղափոխվեք Թալիշ՝ զիջելով ձեր «տնակները» Թալիշից տեղահանվածներին /ընդվզում եմ ինքս ինձ ու շրջապատող լռության հետ/ ...

Մտքերս կտրվում են, երբ դպրոցից հետոգրծի ճանապարհին պատահական տեսնում եմ ճամփեգրի պատի վրա դրված ցեխտու մի տիկնիկ: Տիկնիկն այնպիսի տեղում էր, որտեղից երեւում էր գրեթե ամբողջ Թալիշը: Կարծես թալիշցիները գնացել էւ գյուղը վստահել էին այս տիկնիկին... Ինչպե՞ս է այն հայտնվել այստեղ, ո՞վ է այն դրել պատին, գո՞ւցե զիջերը գյուղից փախչելուց է ընկել փոքրիկ աղջնակի ձեռքից, իսկ հետո զինվորները վերցրել էւ դրել են այստեղ: Ես չգիտեմ տիկնիկի այնտեղ հայտնվելու պատմությունը, բայց ներքուստ ուզում եմ, որ նրա ու նրա տիրոջ պատմությունը լավ ավարտ ունենա: Դրա համար տիկնիկը վերցնում եմ: Գլխումս միտք է ծագում՝ գտնել այդ աղջնակին, ում պատկանում է այս խաղալիքը. չէ՞ որ տիկնիկը նրա մանկությունն է: Գո՞ւցե նրան գտնելով՝ կկարողանամ տիկնիկի հետ վերադարձնել նրա մանկության մի խված մասնիկը... Երանի՜ կարողանայի մանկություններ վերադարձնել...

Դիմացի դարպասի վրա գունավոր կափճներով նկարած պատկերներն ու գրվածքները հուշում են, որ տանը ապրում էին մանուկներ, իսկ ռմբակոծության հետևանքով դարպասի վրա առաջացած ծակերը՝ որ մարդիկ ստիպված են հեռացել: Մտնում եմ՝ առանց դուռը ծեծելու: Չարմանքս ու ուրախությունս չափ չի ունենում, երբ ինձ դիմավորելու տանտերը՝ զարմացած, ուրախացած է գալիս:

«Մեր տանը շուտվանից հյուրեր չենք ընդունել, համեցեք»,- ասաց եւ անմիջապես առաջարկեց օգտվել այգու բարիքներից: Հետո վառում է ծխախոտն եւ պատ-

Նրան հրաժեշտ եմ տալիս, մաղթում խաղաղություն: Վարորդն էլ այդ ընթացքում սարքել էր անիվը: Ուզում էինք արդեն շարժվել, երբ լավեցին երեխաների ձայներ. գնացի ձայների ուղղությամբ: Պարզվում է՝ Թալիշն էլի բնակիչներ ունի: Ապրիլի սկզբից սկսած՝ Թալիշի բնակչուհի Ասյա Հայրապետյանը չորս երեխաների հետ մնացել է հայրական տանը՝ Զարվաճառի Կարաչինար գյուղում: Այսօր երեխաների հետ տեղափոխվել է գյուղ՝ ամուսնու մոտ, ով ծառայում է Թալիշում:

Նրանց տունը մնացել է չեզոք գոտում, որտեղ բնակվելը վտանգավոր է. այդ պատճառով ընտանիքը հիմա ապրում է գյուղացիներից մեկի տանը:

«Ցերեկները մեկ-մեկ գնում եւ պետք եղած իրերը բերում ենք այստեղ, մինչեւ տեսնենք՝ ինչ ենք անելու,- ասում է Ասյա Հայրապետյանը,- երկու ամիս ամուսնու չեմ տեսել, էլ հնարավոր չէր այնտեղ մնալ: Մինչեւ ուսումնական տարվա սկիզբ այստեղ ենք մնալու, հետո՝ չգիտեմ: Եթե սեպտեմբերին հնարավոր լիներ, որ երեխաներս այստեղ դպրոց գնային, գյուղը չէի լքի, բայց միայն իմ քմահաճույքի պատճառով ճիշտ չի լինի մնալ այստեղ, նրանց համար ես պիտի տեղափոխվեմ այնտեղ, որտեղ նրանք կկարողանան նորմալ դասի հաճախել»:

Ասյայի խոսքերով՝ պետք է տեղափոխվեն ճարտար՝ ամուսնու հայրական գյուղը:

Երեխաներն անհոգ խաղում են իրար հետ, շների հետ: «Մենք ոչ մի բանից չենք վախենում»,- ասում են տղաները:

Ինչպես Հայրապետյանների, այնպես էլ մյուս թալիշցիների ընտանիքների ճակատագրերը դեռ անորոշ են:

Ի՞նչ է լինելու նրանց ապագան: Ո՞վ է պատասխանատու այս ամենի համար: Ո՞վ է գողացել այս երեխաների մանկությունը... Այս հարցերն են գլխումս, ականջներումս՝ մեքենայի շարժիչի ձայնը:

Արդյո՞ք մեղավորները նաեւ ես ու դու չենք, ընթերցող, արդյո՞ք ապրիլյան պա-



մում ապրիլին տեղի ունեցած դեպքերի մասին: Պարզվում է՝ տունն ամենաշատ տուժածներից է: Տան մեջ մի քանի արկ է ընկել: Մեկն ընկել է մի քանի ամսական երեխայի անկողինը: Ընտանիքի հայրը դժվարությամբ է զսպում արցունքները: Կինն ու երեխաները ապաստան են գտել Ստեփանակերտի հյուրանոցներից մեկում: Հարցին, թե ինչո՞ւ է դեռ գյուղում, պատասխանում է, որ թեկուզ ավերված, բայց տունն անտեր թողնել չի կարող: «Համ էլ թուրքը հասել է, իսկական օդի քաշելու ժամանակն է»,- ասում է: Առաջարկում եմ թուրք տանել ընտանիքի համար: Առաջարկս սիրով ընդունում է: «Կինս ու երեխաներս այս տարի չեն կերել այս թոթից»,- հուզմունքն ու ուրախությունը հազիվ զսպելով՝ ասում է նա:

տերազմի պատասխանատվությունը նաեւ իմ ու քո ուսերի վրա չէ ծանրացած: Արդյո՞ք ես ու դու չգիտեինք մեր բանական, մեր շրջապատում տիրող վիճակի մասին, արդյո՞ք ես ու դու չենք մեր եղբայրներին, մեր հայրերին ճանապարհել կես մետրանոց խրամատներ: Արդյո՞ք ես ու դու չգիտեինք, որ մեր զինվորները կիսասոված են առաջնագիծ պահում, որ զինվորական կոշիկները մինչեւ ոսկոր վերքեր են առաջացնում, մի՞թե մենք չգիտեինք, որ...

Ապրիլյան պատերազմի ամենամեծ դասը ես ու դու ենք ստացել, ընթերցող, Ամեն ինչ պետք է փոխվի, բայց առաջին հերթին պետք է փոխվենք ԵՍ ՈՒ ԴՈՒ...

L. ԹԵՎՈՍՅԱՆ

Երբ ամեն ինչ կախված է նյութի հասցեատերերից



բախտաբար, չէր պայթել»,- պատմում է 7-ամյա Ներքին հռոմաթաղի Յովհաննեսը:

Նրա հայացքը ստանում է մեծավարի արտահայտություն. ասես՝ ոչ թե 7 տարեկանի, այլ չափահաս մարդու հետ եմ խոսում: «Դե գիտեք, եթե պայթեր՝ ինչ կլիներ»,- ավելացնում է կես տխուր, կես մտածկոտ:

«Առաջին արկից հաջողվեց փրկվել, իսկ երկրորդ արկի պայթյունից հետո ապակիների փշրոց լսեցի: Մայրիկս պառկած էր սենյակում, մահճակալն էլ պատուհանի տակ էր: Վազեցի ու տեսա, որ ապակիները թափվել են նրա վրա, վնասվածքներ է ստացել: Շտապեցի հայրիկիս մոտ, որ հայտնեմ՝ մեքենան պատրաստի, տնից շուտ դուրս գանք...»:

Նա կանգ է առնում մի քանի րոպե: Ես հարցնում եմ:

- Որտե՞ղ էիր ուզում գնալիք, հիվանդանոց:

- Չէ, տատիկիս տուն, տատիկի մոտ ապահով է, տունը գյուղի ներքեի հատվածում է:

- Ապրես, որ չվախեցար,- փորձում եմ հարցիս մանկական երանգ տալ:

- Մի քիչ վախեցա,- պատասխանում է մեծավարի ու շարունակում,- ինձ չկորցրի այդ պահին /բազմիմաստ ժպտում է/ ...Յիմա մայրիկիս վերքերն արդեն առողջացել են: Լավ է, որ գոնե ապակիները շատ հեռու չընկան, թե չէ մեր հեռուստացույցը կվնասվեր,- արդեն ման-

կամտորեն ասում է Յովհաննեսը:

Չրույցի ողջ ընթացքում Յովհաննեսը ձեռքից բաժն ցած չի դնում: Թվում է՝ սպասում է գրույցի ավարտին, որ գնա այգի եւ օգնի այգում աշխատող հորը: Նրա հայացքն ասես ասում է՝ այսպես էլ ապրում եմ: Եթե չաշխատեմ, մեր մասին ո՞վ պիտի հոգ տանի... Ուզում է թեքվել դեպի այգին, մեկ էլ կարծես նոր բան հիշելով՝ շրջվում է դեպի ինձ ու ասում.

- Ընկերոջս հայրիկը գոհվել է: Նրա մայրիկը աշխատանք չունի: Չորս երեխա են, չորսն էլ՝ արդեն... որք /վերջին բառն արտասանում է՝ ասես զգալով բառի ողջ լրջությունն ու ցավը/: Յիմա երեւի իրենց տանն են, ոչ ուտելու բան ունեն, ոչ փող ունեն:

Ես ապշում եմ նրա բառերից եւ մի պահ կարկամում հաջորդ հարցս տալու համար: Նա, ասես գուշակելով միտքս, ասում է.

-Կրակոցներից չեմ վախենում արդեն, բայց չեմ ուզում, որ կրկնվեն:

- Իսկ ի՞նչ երազանքներ ունես:

Լռում է:

- Որ մեծանա՞ ի՞նչ ես անելու:

- Մեքենա վարել գիտեմ, երբ մեծանամ՝ գնալու եմ Երեւան:

- Ի՞նչ ես անելու Երեւանում:

- Գնալու եմ Երեւան, որ այնտեղից էլ մեկնեմ Մոսկվա:

- Ի՞նչու:

- Իմ քեռին այնտեղ է: Ուզում եմ լավ ապրել, չեմ ուզում չարչարվել,- ասում է հոգսաշատ մարդու նման:

Չե՞ս ուզում այստեղ ապրել հարցիս հետեւում է բացասական պատասխանը:

- Ի՞նչ դեպքում կուզեիր այստեղ ապրել,- փոխում եմ հարցս:

- Եթե այսպիսի փոսեր չլինեին, ուղիղ ճանապարհ լիներ, սիրուն տներ լինեին, եթե երեխաները դպրոցում չվախենային /երեխայի խոսքը ռմբակոծության հետեւանքների մասին է/:

- Փաստորեն, եթե ուզում ես այստեղից գնալ, ուրեմն զինվոր դառնալ չես ուզում...:

- Ես շատ եմ ուզում զինվոր դառնալ, միայն չեմ ուզում, որ երեխաների հայրիկները գոհվեն: Դա շատ վատ է...:

Յովհաննեսի հետ հանդիպումից անցել է երկու ամիս: Նրա մասին մի քանի տողով գրել էի Նախորդ իմ նյութերում, հրապարակել էի նրա նկարը՝ խոստանալով, որ կներկայացնեմ նրա պատմությունը: Յրապարակումը ձգձգում էի՝ մտածելով, որ ապրիլյան պատերազմից հետո ինչ-որ բան կփոխվի նրա ու նրա նմանների կյանքում, որ հետո նրա պատմությանը լավ շարունակություն կավելացնեմ, սակայն հասկացա, որ կան բաներ, որոնք չեն փոխվի, եթե ես ու ինձ նմանները լռենք իրականության մասին...:

Յ. Գ. - *Գուցե ես ի գորո՞ւ չեմ ինչ-որ բան փոխելու, բայց այս նյութի հասցեատերերը, անշուշտ, կարող են եւ պարտավոր են...*

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Մարտակերտ. ազատագրման 23 տարին՝ խաղաղության սպասումով

23 տարի առաջ՝ հունիսի 26-28-ը, ազատագրվեց Մարտակերտը:

1992թ. Մարտակերտի անկումից մեկ տարի անց դարաբառյան ուժերը, անցնելով շեշտակի հակահարձակման, ամրացան շրջկենտրոնն իշխող բարձունքներում եւ վերահսկողության տակ առան քաղաքն ու նրա շրջակայքը: Գարնան վերջին եւ ամռան սկզբին իրականացված նախապատրաստական աշխատանքներից հետո ՊԲ հյուսիսային ուղղության ստորաբաժանումները մարտագծի ողջ երկայնքով անցան լայնածավալ հարձակման:

Հարձակման նպատակասլացությունն ապահովելու համար պլանավորվեց միաժամանակյա հարվածներ հասցնել մի քանի ուղղություններով: Սրիավենդից մինչեւ Մատաղիս ձգվող ռազմաճակատի ողջ երկարությամբ կենտրոնացվեցին 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ պաշտպանական շրջաններից ընտրված ուժերն ու կենտրոնական ենթակայության մի շարք ստորաբաժանումներ:

Հունիսի երկրորդ կեսին, հաջողությամբ իրականացնելով իրենց առջեւ դրված մարտական խնդիրները, դարաբառյան ուժերը ազատագրեցին օպերատիվ-մարտավարական տեսակետից շահավետ մի քանի բարձունքներ ու բնագծեր:

Մարտակերտի ուղղությամբ դարաբառյան գործերի առաջխաղացումը կասեցնելու նպատակով հունիսի 26-ին հա-

կառակորդը մարտի մեջ մտցրեց ռազմական ինքնաթիռներ եւ ուղղաթիռներ: Սակայն ճակատամարտի ելքն արդեն կանխորոշված էր:

Այդ օրը Պաշտպանության բանակի մարտիկները դիպուկ հարվածով կոր-



ծանեցին ռմբահարվածներ հասցնող եւս մեկ թշնամական ինքնաթիռ:

Հունիսի 27-ը դարձավ հյուսիսային ուղղությամբ ընթացող մարտական գործողությունների ամենավճռորոշ օրը: ՊԲ ստորաբաժանումների համաձայնեցված գործողությունների շնորհիվ այդ օրն ազատագրվեց Մարտակերտ քաղաքը:

Եթե 1992թ. Շուշիի ազատագրումով Արցախյան պայքարը սկիզբ դրեց Հայաստանի հետ Լաչինի միջանցքով վե-

րամիացման հաղթարշավին, ապա 1993-ի հունիս 26-28-ը՝ Մարտակերտի ազատագրմամբ, անցավ ամբողջ Արցախը ազատագրելու ռազմական ընդհանուր հարձակողականի:

Հունիսի 27-ին թշնամին վերջնական



աշխարհիվեց՝ մարդկային եւ նյութական ծանր կորուստների ենթարկվելով եւ անփառունակ փախուստի մատնվելով:

Թեեւ ավելի քան 120 գոհ տվեց հայկական կողմը, բայց հաջողվեց ի վերջո ճամփա բացել դեպի Արցախի ամբողջական ազատագրում:

23 տարիներ են անցել Մարտակերտի ազատագրումից, սակայն Մարտակերտը շարունակում է դիմակայել հակառակորդի ոտնձգություններին, շարունակում է ապրել՝ հակառակ պատերազ-

մական գործողությունների վերսկսման ամենօրյա վտանգի:

23 տարի անց էլ մարդիկ Մարտակերտում ապրում են հակառակորդի հարձակման վտանգին դեմ հանդիման, որին ականատես եղան ընդամենը մի քանի ամիս առաջ: Ապրիլյան պատերազմական գործողությունների օրերին, որոնք սանձազերծվել էին Ադրբեյջանի կողմից, Մարտակերտը դարձյալ հայտնվել էր թիրախում: Արդեն նախորդ պատերազմի վերքերը կարծես թե սպիացնող բնակիչները նորից իրենց մաշկի վրա զգացին պատերազմի ցավոտ ազդեցությունն ու հետեւանքները: Ակամայից նրանք զուգահեռներ էին գծում անցյալի ու ներկայի միջեւ եւ ապրիլյան օրերին հաճախ էին կրկնում. «Մարտակերտում առավոտները 2016 թվականն է, իսկ կեսօրից հետո՝ 1992-1993 թվականները»: Դա թեւավոր խոսք էր դարձել Մարտակերտում... Սակայն, ինչպես 1993-ից հետո, այնպես էլ այսօր, մարտակերտցիները Մարտակերտ են վերադարձել՝ պատճառված վնասները նորից շտկելու, նորից հող մշակելու, այգի տնկելու, պարզապես ապրելու խաղաղության թելադրանքով: Սակայն, ինչպես 1993 թվականից հետո, այսօր եւս մարտակերտցին նույն հարցն է տալիս՝ ե՞րբ է լռելու այս մաշող պատերազմը եւ ե՞րբ է գալու այնքան ցանկալի մշտական խաղաղությունը...

«ԱՊՐԱՍԺ»

Ջրածեշտի փոխարեն Այսպիսին էր Լենա Գրիգորյանը



իրավունք չունի հանգստանալու: Նա անընդհատ պետք է լինի որոնումների, պրպտումների մեջ՝ միշտ հիշելով, որ նոր գիտելիքի ծեռք բերումը, իմացածին նոր բան ավելացնելը հաճելի գրադոն է, որը չունի վերջակետ, չունի սահման ու հանգրվան:

Այդպես էր մտածում եւ Լենա Գրիգորյանը՝ մեծ սիրո ու հարգանքի արժանացած դասախոսը, ով ավելի քան քառասուն տարի /1974-ից սկսած/ քայլել է այնքան ծանոթ ճանապարհով՝ ասելիքը մտաւարով, մտքում հղկելով, մշակելով, ամբողջական տեսքի բերելով: Ու ամեն անգամ լսարանից դուրս է եկել հոգևած դեմքով, մեղմ ժպիտով՝ զգալով, որ սաներին մի բան է տվել, մի բան է թողել, պատկերավոր լեզվով ասած՝ թողել է իր հոգու մասնիկը: Իսկ դա ամեն ինչ է՝ նպատակ, բաղձանք, նաեւ՝ պարտականություն ու պարտք...

Ծննդյան 60-ամյակի առթիվ պարբերական մամուլում շատ է գրվել, գովեստի խոսքեր ասվել: Իսկ «Լենա Գրիգորյան-60» բրոշյուրը ողողված է ուշագրավ մտքերով: «Նրա նշանակած գնահատականը, թերեւս, ամենաօբյեկտիվն էր, եւ մենք՝ ուսանողներս, այն յուրահատուկ չափանիշ էինք համարում՝ ինքներս մեզ գնահատելու, ճանաչելու համար», - կարդում են բրոշյուրի մեջ արված գրությունը, որի հեղինակները՝ ԱրՊՅ նախկին շրջանավարտներ Օֆելյա Աբրահամյանն ու Զրիստինե Առստամյանն են:

«Ուսուցչի ամբողջ հարստությունը աշակերտների մեջ է, նրա ցանած սերմերի մեջ»՝ հայտնի արտահայտությունն է: Ուզում են հատուկ ընդգծել, որ «ուսուցիչ» բառը այն հասկացությունն է, ասել կուզի՝ ամեն մի խելացի մարդ, կրթության հետ առնչություն ունեցող անհատականություն իրեն ուսուցիչ պիտի համարի: Գիտությունների թեկնածու լինի, պրոֆեսոր, թե ակադեմիկոս, ու ամենակարեւորը՝ մանկավարժ, պիտի օժտված լինի մարդկային գեղեցիկ հատկանիշներով: Տիկին Լենան այդպիսին էր՝ համեստ, խոհեմ, իր գործին նվիրված:

Իսկ մեկ ուրիշն էլ գրում է. «Լենա Գրիգորյանը համալսարանի առաջին դասախոսներից է, ով ներգրավվել է Ղարաբաղյան շարժման մեջ եւ խիզախորեն կատարել ընդհատակայինների կողմից տրված հանձնարարությունները...»:

Մայրենիի լավ գիտակ: Ամեն անգամ այս եզրակացությանն են հանգել, երբ որեւէ առիթով հանդիպել ու հետը գրուցել են գրական, մանկավարժական որեւէ հարցի շուրջ: Ուրախացել են, որ իմ կարծիքը բանի տեղ է դրել, հաստատել, օգտակար խորհուրդ տվել:

Նա համահեղինակն է /Յամլետ Գրիգորյան, Արգիլ Մխիթարյան/ Շարժման մասին գրված առաջին ծավալուն հոդվածի, որը տպագրվել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1988թ. մարտի 18-ի համարում:

Կարեւորը լսել է մինչեւ վերջ: Իսկ սա, համարեք, մեծ շնորհք է, որից զուրկ են շնորհալի հազարավոր մտավորականներ, մանկավարժներ: Չետաքրքիր է, սրանք ինչ են մտածում կամ ինչու են քննելը ցցում: Ի՞նչ է, որ պաշտոն, դիրք ու կոչումներ չունենք, իրավունք չունենք ծառի շվաքուն նստել եւ, կամ վարունգ ուտել, երթուղայինին սպասել... Ինչքան լավ է, որ տիկին Լենան հեռու էր այս արատներից: Ու ոչ միայն նա:

Այս ամենը վկայում են, որ նա սոսկ մանկավարժ, դասախոս չի եղել, ապրել է առօրյա կյանքով, լրջորեն մտախոհվել երկրի, ժողովրդի առջեւ ծառայած խնդիրներով:

Տեսե՛ք: Ամբիոնի պրոֆեսոր, հանրապետության վաստակավոր ուսուցչուհի, տասնյակ գրքերի՝ «Արցախի գրական ընտանիքը, գրականությունը եւ կյանքը, Սուրեն Այվազյան» եւ այլն, քանի՜ քանի՜ հոդ-

ւշենք, որ նա մանկավարժությունը համարել է ոչ միայն մասնագիտություն, այլեւ բարձր ու վեճակ կոչում, որը տրվում է ի վերուստ, այն էլ՝ եզակիների:

Այդ կոչումը արդարացել է պետք: Իսկ սա ամենեւին էլ դյուրին բան չէ: Պետք է կարողալ, կարողալ ամեն օր, շատ կարողալ: Կրթարան, համալսարան մտնող մարդը

վածների, գրախոսականների հեղինակ եւ հաճելիորեն այսքան սովորական, այսքան շիտակ: Ինչպես չզարմանաս, ինչպես չհիշանաս: Ափսոս, հազար՝ ափսոս, որ քիչ ապրեց: Չեռացավ՝ նոր-նոր ոտքը 62-ի շեմին դրած, հեռացավ՝ իր հետ տանելով կոլեկտիվի, մոտիկից ճանաչողների անհուն սերն ու կարոտը, հարգանքն ու հեկեկանքը: Այո՛, քիչ ապրեց ու շուտ հեռացավ կյանքից: Նա դեռ ապրելու, արարելու տարիներ ուներ: Բայց... Բայց մեռավ՝ ակաջը ուշիմ ու խելոք թռչների (Նարեկ, Արսեն, Դանիել, Ջուլիետա, Լեն) զվարթ ծիծաղին, ճիչ ու աղմուկին, հայացքը հարուստ ու գեղեցիկ գրադարանին:

Մեռավ՝ անասելի ծանր, անտանելի ցավը սրտում: Այն հեռու՛ ճամփաներում, այն թեժ մարտերում մնացած որդու՝ 19-ամյա Նարեկի (անձ. Գործ 29, 24.03. 1973.թ. անհայտ կորած է համարվում օգոստոսի 6, 1992-ից) անմոռաց պատկերը սրտում:

Դառն ու դաժան ճակատագիր: Բայց նա իր մեջ կամքի մեծ ուժ գտավ ու մնաց ուղի վրա՝ մխիթարվելով այն լուսավոր մտքով, որ հարյուրների, հազարների նման՝ որդին եւս կմվել, նահատակվել է հայրական օջախի, հայրենի երկրի համար:

Ի դեպ, Ստեփանակերտը թե՛ մոր ու թե՛ որդու համար ոչ միայն հայրենիք էր ու մայրաքաղաք, այլեւ մտածողության տեսակ, աշխարհայացք, ճաշակ: Այսպես էր: Ու նա ջանում է իր սաներին եւս դաստիարակել այս ոգով, այս գաղափարով: Դասախոսի պիտի հետաքրքիր ոչ միայն ուսանողի ուսակությունները, այլեւ նրա հակումը, հայրենի որդի, հայրենիքի նկատմամբ ունեցած պատկերացումները: Այլ կերպ ասած՝ նա անում էր ամեն ինչ, որ բուհի պատերից դուրս գան ոչ միայն գրագետ ուսանողներ, լավ մասնագետներ, այլեւ երկրի արժանավոր քաղաքացիներ: Ու դա նույնպես հաջողվում էր: Ապագայի՝ շրջանավարտների հիացական խոսքը, խոստովանությունները: Ի դեպ, սիրում էր հաճախակի կրկնել՝ ուսուցիչը նա է, ումից սովորելու բան ունես:

Ասում ու անումներ էր նշում (գրողներ, մանկավարժներ, արվեստագետներ), որոնց ստեղծագործությունները հոյզեր է առաջացրել կամ մտորելու տեղիք տվել, հիմքեր ստեղծել՝ խորհելու աշխարհի, շրջապատող միջավայրի, մարդու մասին: Այսպիսին էր Լենա Գրիգորյանը, ում համոզմամբ՝ աստվածաշնչյան պատվիրանները կյանքի մեծագույն արժեքներն էին՝ ընկած ազգային մշակույթի հիմքում: Ու նա հպարտանում էր այդ մշակույթով, այն

ամենով, ինչը հայկական է: Լավ հիշում են մշակույթի պալատում ունեցած նրա ելույթը, որ ներկաները լսեցին հատուկ ուշադրությամբ, հետաքրքրությամբ:

Ներկայացնում են մի պարբերություն նրա խոսքից, իհարկե՝ հիշողությամբ, ո՛չ նույնությամբ. «Հպարտ եմ, որ հայ եմ, հպարտանում եմ իմ ազգի պատմությամբ, վաղվա օրով, բոլոր հայերով: Հայի տեսակն ինձ համար սիրելի է, ընդունելի: Իմ ամենամեծ ցանկությունը ոչ միայն լավ հայ, այլեւ ընտանիքի լավ մայր, ընկեր, քաղաքացի, ուսուցիչ է, վերջապես, մարդ լինելն է...»:

Մարդ լինելը... Սա էր նրա երազանքը: Ու երազանքն այդ շունչ առավ: Եղավ: Ծափափափ գիրը, սակայն ուրիշ էր: Տեսավ ու սարսափեց: Անքուն գիշերներ լուսացրեց: Մաքառեց, տոկաց, բայց ապարդյուն: Մի օր էլ, լուսադեմին հոգևած աչքերը փակեց: Հարեանները, գործընկերները, մոտիկից ճանաչողները, բոլոր-բոլորը լսեցին ու հառաչեցին.

Միքայել ԲԱԼՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ

- Աշխարհից մի լավ մարդ էլ գնաց...

Խմբագրի կողմից

Կան մարդիկ, որոնք ժպիտը միշտ մտում է հիշողությանը մեջ եւ նրանց հիշելիս առաջինը նրանց ժպիտն են հիշում: Տիկին Լենան առանձնահատուկ տեղ է զբաղեցնում այդպիսիների շարքում: Ուսանողական տարիների հիշողությանս մեջ միշտ վառ է նրա բարի, երբեմն սաստող, բայց եւ՛ ներողամիտ ժպիտը: Նա այդ ժպիտով խրախուսում էր լավ սովորողին, ծուլին սաստում, ստիպում դառնալ դեպի ուսումը: Ուսումը նրա համար կյանքի ճանապարհ հարթելու ամենազինավոր պայմանն էր, եւ դա էր պատգամում բոլորիս...

Ամիսներ առաջ պատահական հանդիպեցինք հիվանդանոցում: Զգացի, որ գուհար է, հիվանդոտ: Ասաց, որ հիվանդությունը դժվար բուժելի է, բայց զարմանալիորեն նույն ժպիտն էր դեմքին, որն ասես ասում էր՝ կարելորդ մարդու հոգին չհիվանդանա... Ես էլ ժպտացի... Հետո, երբ եկա տուն, ինձ մեղավոր էի զգում, ինքս ինձ հանդիմանում էի. «Ամոթ է, նա հիվանդությունից էր խոսում, իսկ ես ժպտում էի...»: Հետո հասկացա՝ մենք պետք է ժպիտով բաժանվեինք, որ այսօր այսպես պայծառ ու լուսավոր մարդ հիշողությանս մեջ... Աստված լուսավորի նրա առանց այդ էլ լուսավոր հոգին...

Պետականակերտման տարիներ

Հայրոց պատմության թերեւս ամենաբախտորոշ ժամանակաշրջաններից էր 1917-18թթ. ընկած ժամանակամիջոցը: Եվ պատահական չէ, որ հենց ՀՀ Դաշնակցությունը պիտի լիներ այն միակ իրական ուժը, որ հանուն հայ ժողովրդի ընդառաջ գնար պատմության նետած մարտահրավերներին եւ լծվեր ազգային պետականություն կառուցելու գործին:

տի ներկայանալիս 2 հոգի: Այդ պատգամավորներին ընտրելու համար իրավիք էր խորհրդակցություն՝ որոշելու ընտրությունների կարգը: Բացի Դաշնակցությունից, շրջաններում բոլորը հրաժարվեցին մասնակցել ընտրություններին՝ բավականանալով միայն Շուշիով: Ամբողջ հասարակությունն իր ձայնը տվեց Դաշնակցությանը, որը եւ ուղարկեց իր երկու ներկայացուցիչներին՝ Արամ Բաղդասարյանին եւ Հայկ Թորոսյանին: Համագումարում ընդունվեցին որոշումներ, որոնք կանխորոշեցին Այսրկովկասում քաղաքական նոր գարգացումների ընթացքը:

Ռուսաստանի խորհրդային կենտրոնական իշխանությունը, եւ որոշեց՝ թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականության ոլորտներում լինել միանգամայն անկախ:

Լեռնային Ղարաբաղն այդ ժամանակվանից կտրվեց արտաքին աշխարհից եւ բոլորովին մեկուսացավ: Իշխանության նախկին մարմինները կազմալուծվեցին: Սրվեց հայ բնակչության պարենավորման հարցը, քանի որ դադարեցվեց Դաշտային Ղարաբաղից Շուշի եւ հայկական մյուս բնակավայրերը ներկրվող ցորենի մատակարարումը: Հացի խնդիրը՝ մանավանդ Հիգակի, Խաչենի եւ Վարանդայի շրջաններում, դարձել էր օրհասական: Այդ վիճակը շարունակվեց 1917թ. աշնանից մինչեւ 1918թ. հունիս-հուլիս ամիսների սր բերքահավաքը: Բացի այդ, շրջաններում սկսում էր ուժեղանալ քաղաքական անկայունությունը: Այսպիսով՝ արդեն գլուխ բարձրացրած եւ օրեցօր սաստկացող անիշխանությունը վերացնելու համար պահանջվում էին արագ եւ վճռական միջոցներ:

տո Շուշիից հեռացավ քաղաքի հայկական մասում տեղակայված ռուսական 533-րդ հետեւակային սփիրյան զորամասը: Նրան միացավ ռուս-պարսկական սահմանում գտնվող 6-րդ սահմանապահ գնդի մի զորամաս եւս: 1917թ. դեկտեմբերին ճակատից վերադարձող Ղարաբաղի հայ զինվորներին Եվլախ-Շուշի խճուղու վրա թուրք-թաթարական բանակները գիւնաթափեցին եւ գնդակահարեցին:

Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու եւ վերահաս աղետները կանխելու համար Հայ Հեղափոխական Դաշնակցության Կենտրոնական կոմիտեն որոշեց իրավիքը բոլոր քաղաքական ուժերի խորհրդակցություն:

Դաշնակցությանը հարող մտավորականության մի մասը, հիմնվելով այդ կուսակցության իրական ուժի եւ հեղինակության վրա, առաջարկում էր ստեղծել իշխանություն՝ բաղկացած բացառապես դաշնակցականներից:

Հարունակելի...
Տարեիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

1917թ. աշնանը Թիֆլիսում իրավիքվեց Անդրկովկասյան ժողովուրդների համագումար, որին Լեռնային Ղարաբաղից պի-

Հեղափոխությունից անմիջապես հե-

Կառուցելու ենք այն Արցախը, որը սիրում ենք

Վերջին տարիներին Արցախում շինարարական շատ աշխատանքներ են կատարվել, որոնք բարեփոխել են Արցախը: Արդեն մի տարի գործող Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանը փոխել է ոչ միայն Շուշիի քաղաքաշինական պատկերը, այլև՝ մեծ ներդրում է ունեցել Արցախում կրթական նոր արդյունավետ մոդելի կայացման ու շարունակման մեջ: «Հայաստան» հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի ու Լեռնային Ղարաբաղի կառավարության ջանքերով է կառուցվել այս կրթօջախը, որը կրում է Ֆրանսահայ բարերար Եզնիկ Մոզյանի անունը, ում կտակած միջոցների հաշվին է դրվել ուսումնարանի կառուցման հիմնաքարը: Ի՞նչ մասնագիտություններ է առաջարկում հաստատությունը, ուսուցման ի՞նչ մեթոդներ են սկզբունքներ են կիրառվում, արդյո՞ք շինարարական աշխատանքներում պահպանվում են մեր տարածաշրջանի համար անհրաժեշտ չափորոշիչները եւ արդյո՞ք երկրի քաղաքաշինական պատկերի բարեկարգումը գերխնդիր է ուսումնարանում դասավանդող մասնագետների համար:

Նման հարցերը քննարկելու եւ պարզաբանելու, հարցերի պատասխանները տեղում ստանալու նպատակով այցելեցինք Շուշիի Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան, որտեղ ջերմությամբ եւ անմիջական մթնոլորտում մեզ ընդունեցին ուսումնարանի տնօրեն Վասպուրակ Կարապետյանը, ուսումնարանում դասավանդող շինարար-ինժեներական, էլեկտրաէներգետիկայի, մետաղագործության ու քանդակագործության գծով մասնագետներ Էրիկ Վերոյանը, Սմբատ Ավետյանը եւ Սեյրան Սարգսյանը: Ինչպես ներկայացրեց կրթօջախի տնօրենը՝ ուսումնարանի հիմնական առաքելությունը Արցախի եւ Հայաստանի երիտասարդների համար ժամանակակից արդյու-

Այստեղ կարելու է այն, որ բացի իրենց կատարած աշխատանքի դիմաց վարձատրվելուց, աշակերտները նաեւ աշխատանքային պայմանագիր են կնքում գործատուների հետ, իսկ եռամյա ուսումնառության ավարտին ստանում են պետական նմուշի դիպլոմ: Ուսումնարանում գործում են ժամանակակից սարքավորումներով հագեցած արհեստանոցներ, որոնցից երեքում ներկայումս դասընթացներ են աշխատանքներ են ընթանում հետեւյալ մասնագիտությունների գծով՝ շինարարական մոնտաժման եւ վերանորոգման աշխատանքներ, ներքին եւ արտաքին հարդարման շինարարական աշխատանքներ, ջերմատեխնիկական եւ սանտեխնիկական աշխատանքներ: Մինչդեռ, սա այն ամեն հնարավորությունը չէ, ինչը նախատեսված է ուսումնարանի գործունեության ծրագրում: Առաջիկայում համարվելու է կրթօջախի մասնագիտությունների ցանկը՝ մետաղամշակում, էլեկտրատեխնիկա, վերականգնվող էներգետիկա, ռոբոտաշինություն եւ այլ:

Այն հարցին, թե արդյո՞ք իգական սեռի ներգրավվածություն կա արհեստ սովորելու գործընթացում, տնօրեն Կարապետյանն ավելացրեց. «Մեր երկրում կանայք վստահորեն առաջնորդի դեր են ստանձնում բիզնեսում եւ հասարակությունում, բայց եւ պետք է ասեմ, որ մեր կենսաձեւն ու մտածելակերպը դեռեւս չեն հասել զարգացվածության այն մակարդակին, որտեղ կին պատշարը, ներկարարը, սանտեխնիկը դիտվեն որպես օրինաչափ երեւոյթ: Ուսումնարանը նաեւ այս բացը լրացնելու միտում ունի եւ ընդունելության պարագայում սեռի հետ կապված խտրականություն չի դնում: Սա եւս կարելու քայլ է դեպի զարգացում: Գալիք ուսումնական տարվա համար արդեն իգական սեռի դիմորդներ ունենք, որոնց ուղղորդում ենք հիմնականում նկարիչ-ներկարար եւ խճանկարիչ

Սարգսյանը կարելու են արտերկրում նոր ուսումնական մեթոդների ուսումնասիրությունը, մանկավարժական ժամանակակից մոտեցումների դերն ու նշանակությունը կրթական ոլորտում, մասնագիտական նոր գիտելիքների եւ փորձի ձեռքբերումը Ֆրանսիա-Արցախ համագործակցության շրջանակում: Ինչպես նշում է Սեյրան Սարգսյանը, նրանք մտադիր են կառուցողական գործընթաց սկսել նոր մանկավարժական մեթոդների կիրառման ուղղությամբ, քանի որ ոչ մի նորարարություն միակզամից չի ընդունվում: Երիտասարդ մասնագետները զարմանքով են նկարագրում Ֆրանսիայի վարքն ու բարքը, ինչը չէր համընկնում մինչ այդ իրենց՝ գրքերից ու ֆիլմերից ունեցած պատկերացումներին: Եթե եվրոպական մասնագիտական չափանիշների ընդօրինակման կարիք կա, ապա ավանդույթներից եւ ընդունված վարքագծի նորմերից որոշակի դժգոհություն է նկատվում մեր զրուցակիցների մոտ, փոխարենը՝ հայեցի դաստիարակությունը գերադասելու վստահ արտահայտություն են անում նրանք: Անթաքույց եռանդով տղաներն իրենց հայրենիքին նվիրման ու գիտելիքների ներդրման մասին են պատմում, որը պետք է իր արտացոլումն ունենա Մոզյանի ուսումնարանի սաների՝ կայացած վարպետներ ու մասնագետներ դառնալու բարդ եւ հայրենասեր գործընթացի մեջ: Տղաներն ասում են, որ Արցախն այսօր արհեստավորների մեծ կարիք ունի: Ուսումնարանը հնարավորություն է տալիս նրանց, ովքեր ուզում են ձեռք բերել մասնագիտություն եւ լինել մրցունակ:

Խոսելով երկրի ճարտարապետության յուրօրինակության եւ քաղաքաշինության նորմերի բարելավման մասին՝ Էրիկ Վերոյանը նշում է, որ երկրում քաղաքաշինությունը լավ ճարտարապետական մտքի կարիք ունի, որ չխաթարելով հարյուրամյակներից մեզ հասած ժառանգությունը՝ երկիրը դառնա հին ու նոր հարյուրամյակներում հանգրվանած ժամանակակից բնակավայր, իսկ դրա համար հսկայածավալ ներդրումներ են պետք: Մինչդեռ ուսումնարանի տնօրենն ամեն ինչ չէ, որ կապում է ֆինանսների հետ, եւ առանձնաշունչ է. «Նորանկախ մեր հանրապետության ինքնահաստատման եւ ազգային ինքնագիտակցության պահպանման ռազմավարական ճանապարհին ավելի քան անհրաժեշտ են ոչ միայն դրամական միջոցներ, այլև ցանկություն եւ կազմակերպվածություն: Վերջին տարիներին շինարարական շատ աշխատանքներ են կատարվել, որոնք բարեփոխել, գեղեցկացրել են նոր շուկա եւ հաղորդել Արցախին: Ուսումնարանը հանձն է առել միավորել մասնագետներ, աշակերտներ, վարպետներ, ովքեր կարող են նպատակային զարգացում տալ իրենց ներուժին, կրթել եւ կրթվել իրենց երկիրը սիրելու եւ նրան նվիրվելու ոգով»:

Այն հարցին, թե արդյո՞ք արցախցիները բնակվում են ապահով շենքերում ու տներում, երիտասարդ շինարարները մեկնաբանում են, որ ցանկացած շինարարական ծրագիր կիրառելու համար առաջին հերթին հաշվի են առնվում տարածաշրջանի առանձնահատկությունները: Մեր դեպքում պատերազմական գոտին, սեյսմոլոգիական պահանջներն են չափորոշիչներ



սահմանում, ինչը սակայն չի խանգարում կառուցել եւ ճարտարապետական ինքնատիպ մոտեցմամբ բարեփոխել եւ սեյսմակայուն, ռաբադոնությունից, հրթիռակոծությունից պաշտպանված, ապաստարաններով հագեցած կառույցներ, որոնք կարող են արագ պատսպարման ու մարդկային կյանքեր փրկելու ֆունկցիա կատարել: Նոր տեխնոլոգիաների գործածումը, ինչպիսին է օրինակ միաձուլ երկաթ-բետոնայա համակարգով արված շինարարությունը, համապատասխանում է մեր տարածաշրջանի ամենախիստ չափանիշներին: Այսօր լրջագույն ուժեղացման կարիք ունեն խորհրդային նորմերով կառուցված հին շենքերը, որոնք եւս գտնվում են ուշադրության կենտրոնում եւ աստիճանաբար վերանորոգվում են նորարարական մոտեցումների կիրառմամբ:

Հեռանկարներ կան ռոբոտաշինության բնագավառում: Տնօրենի խոսքով՝ արդի տեխնոլոգիաների մուտքն Արցախ կարելու է նրանով, որ մեզ համար անթույլատրելի են մարդկային կորուստները մարտադաշտում: Ծրագրեր կան ռազմի դաշտում գինվորին ռոբոտով փոխարինելու վերաբերյալ: Հնարավոր է՝ ուսումնարանը ոչ հեռու ապագայում թողարկի նաեւ ռոբոտ-գինվոր, որը ռազմավարական մեծ նշանակություն ունի երկրի համար:

Եզնիկ Մոզյանի անունը կրող արհեստագործական ուսումնարանը նոր թափ է հարդրում թե՛ հանրապետության կրթական համակարգին, թե՛ շինարարական ոլորտին: Ուսումնարանը ազդեցություն կունենա Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման վրա՝ շարունակաբար լրացնելով մասնագիտական այն ներուժը, որի կարիքն այսօր խիստ զգացվում է: Հարդրակից լինելով եվրոպական առաջատար փորձին՝ ուսումնարանը հովանավորների եւ երիտասարդ տնօրինության օժանդակությամբ պատրաստում է եւ կշարունակի պատրաստել արհեստավարժ եւ որակյալ մասնագետներ, որոնք շնորհիվ ու մասնակցությամբ Արցախի քաղաքներն ու գյուղերը կշարժվեն դեպի կայուն ապագա, եւ, ինչպես նշում է Սմբատ Ավետյանը՝ նրանք կառուցելու են այն Արցախը, որը սիրում են:

Ալիսա ԱՎԱԳՅԱՆ
Սոնյա ԱՎԱԳՅԱՆ



նավետ ուսումնական մեթոդներով լիարժեք մասնագիտական կրթություն ապահովել է: Ուսումնարանում կարող են սովորել իններորդ դասարանն ավարտած աշակերտներ: Այն նախատեսված է 450-500 սովորողների համար: Առաջին ուսումնական տարում ուսումնարան է ընդունվել 60 աշակերտ: Ի տարբերություն մնացած ուսումնական հաստատությունների՝ սովորողներն այստեղ կոչվում են աշակերտ, ինչը բնորոշ է արհեստ սովորողին: Աշակերտները, հանրակրթական դպրոցի ծրագրից զատ, սովորում են շինարարական ոլորտի արհեստներ՝ միաժամանակ համատեղելով փորձուսուցումը շինհարթակներում:

մասնագիտությունների: Համապատասխան մոտեցման դեպքում՝ փխրուն ու քնքուշ Եակնեթն էլ բանիմաց արհեստավորներ ու վարպետներ կդառնան»:

Ուսումնարանում դասավանդող մասնագետները, որպես ուսումնարանում աշխատելու պարտադիր պայման, Ֆրանսիայում պարբերաբար վերապատրաստում են անցնում: Այս համագործակցությունը հնարավորություն է տալիս ուսումնարանում ապահովել եվրոպական չափանիշներին համարժեք մասնագիտական կրթություն: Վերջերս Ֆրանսիայից վերադարձած ուսումնարանի վարպետ-մանկավարժներ Սմբատ Ավետյանն ու Սեյրան

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կոմունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական
խորհուրդ